Արձանագրություն N 2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/8Ս» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 29.04.2024թ.
ժամը 11:00:
ավարտ՝ 03.05.2024թ.
ժամը 16:30:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Կարապետ Հյուսիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Հրաչյա Բաղդասարյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման վերահսկում ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Մովսես Ավագյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Թադևոս Կիլիչյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ճանապարհների պահպանման և շահագործման բաժնի ճանապարհների պահպանման և շահագործման տարածքային ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝

Կարեն Բաբախանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի փորձագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

<u>Օրակարգ</u>
<u>Հայտերի բացման և գնահատման նիստի մասին</u>

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/8Ս» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Արտաշատի խճուղի 15/1, Շենգավիթ, ք.Երևան, Հայաստան	eurobudplus@gmail.com +374 77 91-76-58
2	«Ռոադ կոնցեպտ» ՍՊԸ և «Վիրաժ» Ա/Կ կոնսորցիում	ՀՀ, Երևան, Կ. Ուլնեցու 31	road.koncept@mail.ru +374 77 29-65-22

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Պատվիրատուին ուղղված հարցումները և դրանց տրված պարզաբանումներ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում ներառված Ձև 1-ում առկա են հետևյալ անճշտությունները.

- Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ բաժնի 8-րդ տողի Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ և Միավորի գինը /հազ. դրամ/ սխալ է բազմապատկված /12,80x605,342=944,334/, սակայն ընդամենը տողում հաշվարկը ճիշտ է կատարված՝ ներկայացված միավորի գնին համապատասխան:

- Մետաղական արգելափակոցների պահպանում բաժնում Ընդամենը /հազ. դրամ/ սյունակում ներկայացված գումարը /48372,320/ 17,384 ՀՀ դրամով ավելի է, քան Ընդհանուր երկարությունը / 1000 գմ/ /37,306/ բազմապատկած Միավորի գինը /հազ. դրամ/ /1296,636/:

Հրավերով սահմանվել է, որ Ձև 1-ը շտկման ենթակա չէ: Տեղի ունեցավ գնահատող հանձնաժողովի անդամների կարծիքների փոխանակում: Գնահատող հանձնաժողովի անդամները գտնում են, որ արձանագրված անճշտությունները որևէ կերպ չեն կարող խոչընդոտել պայմանագրի կատարմանը, միավորների գները սահմանված են հստակ, դրանց հանրագումարը ճիշտ է: Գնումների մասին ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը: Գնահատող հանձնաժողովը գտնում է, որ արձանագրված ոչ էական անճշտությունների հիման վրա հայտի մերժումը կհակասի Օրենքի վերոնշյալ դրույթին, քանի որ արդյունքում /2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին պայմանագիր շնորհելու դեպքում/ պետությունը պահանջվող աշխատանքները ձեռք բերելու նպատակով 5 տարվա ընթացքում կվճարի 21 814 395 ՀՀ դրամով ավելի գումար:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի**	

	միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման, ինչպես նաև այդ ճանապարհների վրա առկա պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ	
	Նախահաշվային գին 247 470 923 ՀՀ դրամ	
«ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	**195 914 268**	**235 097 121**
«Ռոադ կոնցեպտ» ՍՊԸ և «Վիրաժ» Ա/Կ կոնսորցիում	199 550 000	239 460 000

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց.***

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/8Ս» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել՝ պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով, ինչպես նաև հրավերով սահմանված, պայմանագրի կատարման համար պահանջվող մեքենա-սարքավորումների վերաբերյալ տեղեկատվությունը /ներառյալ սեփականության իրավունքը, անհատույց օգտագործումը կամ վարձակալությունը հավաստող փաստաթղթերը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Խաչատրյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Հյուսիսյան _____

Հ. Բաղդասարյան _____

Մ. Ավագյան _____

Թ. Կիլիչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Բաբախանյան _____

Протокол N 2

Заседания открытия и оценки заявок комиссии процедуры открытого конкурса под кодом «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/8Ս» для нужд министерства территориального управления и инфраструктур РА

Время проведения заседания оценочной комиссии

начало՝ 29.04.2024г.
11:00 часов.
окончание՝ 03.05.2024г.
16:30 часов.

Участвовали

Председатель комиссии: Арам Хачатрян, ***Члены комиссии:*** К. Юсисян, Г. Багдасарян, М. Авагян, Т. Киличян, ***Координатор закупок:*** Карен Бабаханян

Повестка

Об открытии и оценке заявок

1. Наименование и адреса участников, представивших заявки

1.1 В рамках процедуры закупок под кодом «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/8Ս», организованной министерством территориального управления и инфраструктур РА заявки представили:

N	Наименование участника	Адрес	Эл. Почта, тел.
1.	ООО «Евробуд Плюс»	Ереван, Аштаракская магистраль 15/1	eurobudplus@gmail.com +374 77 91-76-58
2.	Консорциум ООО «Роад Концепт» и АК «Вираж»	Ереван, К. Улнецу 31	road.koncept@mail.ru +374 77 29-65-22

2. Информация об запросах и предоставленных пояснениях

2.1 В отношении приглашения запросов и предоставленных пояснений не было.

3. Информация об наличии и соответствии установленным требованиям документов, включенных в каждую заявку

3.1 Заявки, представленные участниками, соответствуют требованиям, указанными в приглашении. В Форме 1, включенной в заявку, поданную ООО «ЕВРОБУД ПЛЮС», имеются следующие неточности:

- ВЕСНА-ЛЕТО-ОСЕНЬ строка 8, длина обслуживаемого участка /км/ и цена за единицу /Тыс. драм/ неправильно умножается /12,80x605,342=944,334/, но расчет производится правильно всего в одну строку, согласно цене представленной единицы.

- Хранение металлических оград в столбце Всего/ тыс. драм, указанная в столбце драм /48372,320/, на 17,384 драма больше, чем общая длина /1000 г/ /37,306/, умноженная на цену за единицу /ок. драм/ /1296,636/.

В приглашении оговаривалось, что Форма 1 исправлению не подлежит. Состоялся обмен мнениями членов оценочной комиссии. Члены оценочной комиссии считают, что зафиксированные неточности никоим образом не могут помешать исполнению договора, цены паев четко определены, их сумма верна. В соответствии со статьей 3, частью 1, пунктом 2 Закона РА «О закупках» (далее – Закон), целью Закона является экономичное, эффективное и выгодное осуществление закупок и процесса закупок. Оценочная комиссия считает, что отклонение заявки на основании зафиксированных несущественных неточностей будет противоречить вышеуказанному положению Закона, поскольку в результате /в случае присуждения контракта участнику, занявшему 2 место/, государство заплатит на 21 814 395 драмов больше в течение 5 лет для приобретения необходимых работ.

Учитывая вышеизложенное, оценочная комиссия приняла решение оценить представленные участниками заявки как удовлетворительные.

Принято решение: За - 5, Против – 0

4. Цена, предложенная каждым участником

Участники представили следующие ценовые предложения:

Наименование Участника	Предложенная цена /без НДС/ Драм РА	Предложенная цена /включая НДС/ Драм РА
	Лот 1 Текущее летнее и текущее зимнее содержание межгосударственных, республиканских автодорог Аштаракского района Арагацотнского марза РА, а также работы по содержанию систем ограждений (металлических ограждений) на этих дорогах	
	Цена согласно смете 247 470 923 драм РА	
ООО «Евробуд Плюс»	**195 914 268**	**235 097 121**
Консорциум ООО «Роад Концепт» и АК «Вираж»	199 550 000	239 460 000

Учитывая результаты оценки заявок участников оценочная комиссия **решила:**

- Как участника, сответствующего требованиям, установленным приглашением и предложившему наименьшую цену в рамках процедуры закупки под кодом «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/8Ս» избранным участником признать ООО «Евробуд Плюс».

- Утвердить текст обьявления об решении подписания договора.

- Согласно части 3-ей 10-ой статьи закона РА <<О закупках>> установить срок бездействия длительностью 10 календарных дней.

- С целью подписания договора после истечения срока бездействия предоставить избраному участнику проект договора и предложить в течении 5-и рабочих дней представить обеспечение договора в размере 10-и процентов от цены закупки и обеспечение квалификации в размере 30-и процентов от цены закупки.

Принято решение: За - 5, Против – 0

7. Имя, фамилия и подпись членов комиссии, принимающих участие в заседании

Председатель:	**А. Хачатрян**	_____
Члены:	**К. Юсисян**	_____
	Г. Багдасарян	_____
	М. Авагян	_____
	Т. Киличян	_____
Секретарь:	**К. Бабаханян**	_____